

«Հայոց եկեղեցու պատմություն»

11-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ի՞նչ պատվիրեց հրեշտակը մոզերին.

(0.5 միավոր)

- 1) Ողջ մարդկությանը հայտնել Հիսուս Քրիստոսի ծննդյան ավետիսը
- 2) Մանուկ Հիսուսին, Մարիամին և Հովսեփին ուղեկցել Եգիպտոս
- 3) Իրենց երկրները վերադառնալ այլ ճանապարհով և Հերովդեսին չհայտնել մանուկ Հիսուսի գտնվելու վայրի մասին
- 4) Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին տեղեկացնել Օգոստոս կայսրին

2. Ինչպե՞ս է կոչվում եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը.

(0.5 միավոր)

- 1) Նախատոնակ
- 2) Տնօրինեք
- 3) Հիմնօրինեք
- 4) Նավակատիք

3. Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսը հայ ո՞ր մեծանուն գործչին նշանակեց Բագրևանդի եպիսկոպոս.

(0.5 միավոր)

- 1) Ղազար Փարպեցուն
- 2) Մովսես Խորենացուն
- 3) Եզնիկ Կողբացուն
- 4) Եղիշեին

4. Ինչպե՞ս Պիղատոսն արտահայտեց իր անհամաձայնությունը Հիսուսին մահվան դատապարտելու որոշման վերաբերյալ. (0.5 միավոր)

- 1) ծնկի իջավ և աղոթեց
- 2) վիճեց քահանայապետերի հետ
- 3) ջուր վերցրեց և լվաց ձեռքերը
- 4) շփոթված դուրս եկավ դահլիճից

5. Հայ Առաքելական Եկեղեցու յոթ խորհուրդներից ո՞րն է համարվում Ա. Պատարագի առանցքը. (0.5 միավոր)

- 1) Մկրտության խորհուրդը
- 2) Դրոշմի խորհուրդը
- 3) Ապաշխարության խորհուրդը
- 4) Հաղորդության խորհուրդը

6. Ո՞ր տիեզերական ժողովը ընդունեց «Մի աստվածություն, երեք անձինք» բանաձևը. (0.5 միավոր)

- 1) Նիկեայի
- 2) Կոստանդնուպոլսի
- 3) Եփեսոսի
- 4) Քաղկեդոնի

7. Ո՞ր թվականին է տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու առաջին մեծ բաժանումը. (0.5 միավոր)

- 1) 325թ
- 2) 381թ.
- 3) 451թ.
- 4) 1054թ.

8. 1465 թ. ո՞ր կաթողիկոսը Սմբատ Արծրունուն օծեց Հայոց թագավոր.
(0.5 միավոր)

- 1) Ստեփանոս Տղա
- 2) Զաքարիա Գ
- 3) Ստեփանոս Ե Սալմաստեցի
- 4) Մովսես Տաթևացի

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Տյառնընդառաջի արարողությունը Հայոց եկեղեցում սկսվում է երեկոյան ժամերգությամբ, որի ժամանակ երգվում է

« _____ » շարականը:
(1 միավոր)

10. Եկեղեցին բարեկարգելու նպատակով Հովսեփ Ա Հողոցմեցի կաթողիկոսը _____ թ. հրավիրեց Շահապիվանի եկեղեցական ժողովը:

(1 միավոր)

11. Սյունյաց թեմի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբեյանը իր << _____>> պոեմում բաղձանք էր արտահայտում Վաղարշապատում վերականգնված տեսնելու «Թագավորի գահն ու կաթողիկոսի աթոռը»:

(1 միավոր)

12. Հաշվի առնելով Մեծ եղեռնի ողբերգական հետևանքները՝ Գևորգ Ե կաթողիկոսը մերձավոր հարազատների միջև ամուսնական արգելքը իջեցրեց մինչև _____ աստիճանի:

(1 միավոր)

№ 13-14

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝
յուրաքանչյուրը 4 փաստից**

**13. Համապատասխանեցնել ստեղծագործությունը հեղինակի անվանը.
(1 միավոր)**

- 1) Եզնիկ Կողբացի
- 2) Հովհան Օձնեցի
- 3) Դավիթ Անհաղթ
- 4) Մխիթար Գոշ

- ա) «Ընդդեմ պավլիկյանների»
- բ) «Եղծ աղանդոց»
- գ) «Հայոց պատմություն»
- դ) «Փիլիսոփայության սահմանումները»
- ե) «Դատաստագիրք հայոց»

| | |
|---|--|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |

**14. Հայոց կաթողիկոսների գահակալման տարեթվերը համապատասխանեցնել նրանց
անուններին.
(1 միավոր)**

- 1) Մկրտիչ Ա Խրիմյան
- 2) Հովհաննես Ը Կարբեցի
- 3) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
- 4) Ներսես Ե Աշտարակեցի

- ա) 1831-1842 թթ.
- բ) 1843-1857 թթ.
- գ) 1866-1882 թթ.
- դ) 1892-1907 թթ.
- ե) 1932-1938 թթ.

| | |
|---|--|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |

№ 15-16

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող
առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից**

**15. Եկեղեցական ժողովները դասավորել ըստ դրանց գումարման
հերթականության. (1 միավոր)**

- ա) Դվինի I
- բ) Շահապիվանի
- գ) Աշտիշատի
- դ) Քաղկեդոնի
- ե) Արտաշատի

| | |
|---|--|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |
| 5 | |

**16. Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները դասավորել ըստ նրանց
հիմնադրման հաջորդականության. (1 միավոր)**

- ա) Աղթամարի կաթողիկոսություն
- բ) Սսի կաթողիկոսություն
- գ) Կոստանդնուպոլսի հայոց
պատրիարքություն
- դ) Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսություն
- ե) Երուսաղեմի հայոց պատրիարքություն

| | |
|---|--|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |
| 5 | |

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

«...Ո՛չ և ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր Աթոռը: Ես չե՛մ հեռանա Հայոց Առաքելական Եկեղեցու օջախից: Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կանխել, եթե ի զորու չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ՝ շեմի վրա Մայր Աթոռի, որի գահակալի պատիվն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ և Աստծու ողորմությամբ...»:

(2 միավոր)

1) Ո՞վ է այս խոսքերի հեղինակը:

2) Ո՞ր իրադարձության նախօրեին են ասվել այս խոսքերը:

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Նշված պատմիչներից ովքե՞ր են գրել «Տիեզերական պատմություն»:

(1x1=2 միավոր)

- 1) Կիրակոս Գանձակեցի
- 2) Մատթեոս Ուռհայեցի
- 3) Վարդան Արևելցի
- 4) Արիստակես Լաստիվերտցի
- 5) Ստեփանոս Տարոնեցի

| |
|--|
| |
| |

19. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են ճիշտ. (0.5 X 2 = 1 միավոր)

- 1) 1897 թ. հունիսին Ռուսաստանի Պետական խորհրդի որոշմամբ հայկական բոլոր ծխական դպրոցները դրվում էին կաթողիկոսի տնօրինության ներքո:
- 2) 1910 թ. Գևորգ Ե Սուրենյանցը դիմում է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով հարց բարձրացնել ցարի առջև՝ 61-րդ հոդվածն իրականացնելու համար:
- 3) 1824 թ. Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում հիմնում է հայկական դպրոց, որը հետագայում կոչվում է Ներսիսյան:
- 4) 1828 թ. հունվարին ցարական կառավարության կողմից Ներսես Աշտարակեցուն շնորհվում է Ալեքսանդր Նևսկու շքանշան:
- 5) 1846 թ. էջմիածնում ստեղծվում է «Համազգյաց» ընկերությունը, որի նպատակն էր միավորել Հայոց եկեղեցու հետևորդներին և կաթոլիկ հայերին:

| |
|--|
| |
| |

№ 20

Խնդիր-առաջադրանք (2 միավոր)

Խաչքարը բացօթյա, խիստ որոշակի դիրքով կանգնեցված ուղղաձիգ սալ է, որի արևմտահայաց կողմի կենտրոնական մասում քանդակված է խաչ՝ պարուրված տարբեր զարդանախշերով: Այն զուտ հայկական քրիստոնեական կոթող է և հայ ինքնության ամենահայտնի խորհրդանիշներից մեկը: Խաչքարային արվեստը Հայաստանում սկզբնավորվել է դեռևս IV-VI դարերում:

Ներկայացրե՞ք խաչքարի խորհրդաբանությունը:

№ 21

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացրե՞ք Գարեգին Ա (1995-1999) կաթողիկոսի գործունեությունը եկեղեցի-պետություն համագործակցության և եկեղեցու ներքին միասնության ամրապնդման ուղղությամբ:
